ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2023թվականի N 50-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10 ՄԱՅԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 05 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 10-ը մայիսի 2023 թվականի թիվ 05 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 10.05.2023 թվականի թիվ 05 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Մուրադ Խաչիկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 0.58951 հա գյուղատնտեսական նշանակության հողամասից առանձնացված 0.19127 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին

3. Արենի համայնքի ավագանու 15 մարտի 2023 թվականի «Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին և Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին ուղերձ հղելու մասին» թիվ 27-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

4. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ալիսա Սերյոժայի Բարսեղյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 5 հա հողամասից առանձնացված 0.20440 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

5. Վայոց ձոր մարզի նախկին Արփի համայնքի ավագանու 24 հունիսի 2010

թվականի թիվ 16, Ագարակաձոր համայնքի ավագանու 09 փետրվարի 2011 թվականի թիվ 03, Աղավնաձոր համայնքի ավագանու 2011 թվականի թիվ 11 և Ռինդ համայնքի ավագանու 05 ապրիլի 2011թվականի թիվ 16 որոշումներով հաստատված մանկապարտեզների կանոնադրությունները ուժը կորցրած ճանաչելու և Արենի համայնքի Արփի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Ռինդ բնակավայրերի մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին:

6.Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման հարավային կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացման ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:

7. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

8. ՀՀ ԵԿՄ Վայոց ձորի մարզային խորհրդի նախագահ Մասիս Ղազարյանի գրությունը քննարկելու և դրական աջակցություն ցուցաբերելու մասին:

9.Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչներ Գնել Ղազարյանի և Արսեն Խուդոյանի դիմումները քննարկելու և «Բեզոար» բնապահպանական հիմնադրամի վարձակալած արոտների տարածքներում բնակիչների կողմից անասուններ արածեցնելու հնարավոր խոչընդոտները վերացնելու վերաբերյալ:

10. Արենի համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին դրական օգնություն ցուցաբերելու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՆԵԼ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**